## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/8ՏՀ ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի արդյունքում 27.11.2018թ կնքված պայմանագրում 20.12.2018թ կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի ժամկետի երկարացում:

Փոփոխության նկարագրություն: ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդից գյուղի կից մայրուղու Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն

Համաձայնագրի գինը կազմում է 457000 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: 27.11.2018թ *կնքված թիվ* ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/8ՏՀ *պայմանագրի 7.5 կետ:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անի Պետրոսյանին:

Հեռախոս՝ 010 59-00-38

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
# 27.11.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/8ՏՀ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

«20» դեկտեմբերի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քարազարթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է.Ոսկանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 27.11.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/8ՏՀ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

Կասեցնել պայմանագրի կատարման ժամկետը մինչև 2019թ. մայիսի 31-ը:

Սահմանել ծառայությունների կատարման նոր ժամկետ, սկիզբը հաշվելով 2019թ. մայիսի 31-ից սկսած՝ 30 օրացուցային օր:

1.1 Լրացնել պայմանագրում 4.1 կետը հետևյալ խմբագրմամբ <<Պայմանագրի գնից՝ մինչև 457000 (չորս հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2019թ.-ի իրականացվելիք ծառայությունների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի (կցվում է):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության | «Քարազարթ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, | Ք.Սիսիան, Ծիրվանզաղե 5 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02565518 | ՀՎՀՀ 09811433 |
| ՀՀ 900011020733 | ՀՀ 193005772382010 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հաստատված է
N ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2018/8ՏՀ գնման պայմանագրի
«20» դեկտեմբերի2018թ. կնքված
թիվ Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71351540/100 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | դրամ | 480 000.0 | 1 | | համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը: |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

| ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդից գյուղի կից մայրուղու Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | |
|---|---|
| *Ծրագրի անվանումը* | ՀՀ 2018թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում |
| *Ֆինանսավորման աղբյուր* | 2018թ. ՀՀ պետական բյուջե |
| *Պատվիրատու* | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն |
| *Ծառայության անվանումը* | ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդից գյուղի կից մայրուղու Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն |
| *Ճանապարհի անվանումը* | Լոռի Բերդից գյուղի կից մայրուղու Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց տանող ճանապարհ |
| *Հատված* | Լոռի Բերդից գյուղի կից մայրուղու Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց |
| *Աշխատանքի տեսակը* | Ըստ նախագծի |
| *Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ* | • Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից |

| | |
|---|---|
| | նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին<br>• Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը<br>• Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին<br>• Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի<br>• Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար<br>• Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար<br>• Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով<br>• Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը)<br>• Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը<br>• Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)<br>• Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը: |
| ***Հաշվետվության ներկայացման պահանջներ*** | • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ ***ընթացիկ և ավարտական հաշվետվություններ***, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:<br><br>• ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության |

| | |
|---|---|
| | հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):<br><br>***Ավարտական հաշվետվությունը*** պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)<br><br>• ***Ընթացիկ հաշվետվությունները*** ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:<br>• ***Ավարտական հաշվետվությունը*** ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում: |
| ***Նորմատիվային պահանջներ*** | Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝<br>• ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի<br>• Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի<br>• ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման |

Ծառայությունների մատուցման ժամկետը

| *սկիզբը* | *ավարտը* |
|---|---|
| Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը | Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը |

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

**ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ գյուղի կից մայրուղուց «Աշոտ Երկաթ» պատմամշակութային ամրոց տանող ճանապարհի ասֆալտապատում**

**2019թ.**

(ՀՀ հազար դրամ)

| NN | Աշխատանքի անվանումը | Չափ. միավ. | Ծավալը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | ***Հողային աշխատանքներ, երթևեկելի մաս, կողային առուներ, կողնակներ*** | | |
| 1 | Հունի մաքրում ավելորդ գրունտից | $մ^3$ | 53,36 |
| | 3 - րդ կարգ ձեռքով | | |
| 2 | Առվի բետոնի կողային հատվածի մաքրում | $մ^3$ | 33,35 |
| | 3 - րդ կարգ ձեռքով | | |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Ավելորդ բնահողի բարձում ինքնաթին | 1000մ³ | 0,08671 |
| 4 | Տեղափոխում 1 կմ | տն | 147,43 |
| 5 | Ե/Բետոնե առվի վերականգնում Վ-15,0 բետոնից | մ³ | 6,00 |
| 6 | Ավազակոպճային հիմնատակի իրականացում | մ³ | 60,0 |
| 7 | Ճանապարհի հարթեցում առանց նյութի ավելացման տոփանումով | 100մ² | 6,56 |
| 8 | Խճային հիմքի կառուցում 10 սմ հաստութ. | 100մ² | 84,96 |
| | | | |
| 9 | Բիտումի տարածում ճանապարհային | տն | 35,00 |
| | հիմքի վրա 4,12տն/ 1000մ2 | | |
| 10 | Փոսային նորոգում h = 5 սմ հաստ.մինչև | 100մ² | 0,040 |
| | 5 սմ մակերեսով «Բ»տիպի վերին շերտ ա/բետ. | | |
| 11 | Հարթեցուցիչ շերտի իրականացում | տն | 56,65 |
| | «Բ» տիպի | | |
| 12 | Բիտումի տարածում գոյ. ունեցող ճանապար- | տն | 0,9440 |
| | հային հիմքի վրա 0,5 տն/ 1000մԱ | | |
| 13 | Ծածկի վերին շերտի իրականացում H=5սմ | 100մ² | 103,79 |
| | «Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից | | |
| 14 | Կողնակների ամրացում ավազակոպիճով | 100մ² | 19,45 |
| | 10 սմ հաստությամբ 500 մմ լայնությամբ | | |
| | **Իջատեղեր** | | |
| 1 | Խճային հիմքի կառուցում 10 սմ հաստութ. | 100մ² | 3,33 |
| | | | |
| 2 | Ծածկի վերին շերտի իրականացում H=5սմ | 100մ² | 3,328 |
| | «Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից | | |
| | **Մուտքեր** | | |
| 1 | Խճային հիմքի կառուցում 10 սմ հաստութ. | 100մ² | 4,39 |
| | | | |
| 2 | Ծածկի վերին շերտի իրականացում H=5սմ | 100մ² | 4,393 |
| | «Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից | | |
| 3 | Թերթավոր պողպատ | մ² | 22 |
| | **Հետիոտն անցումների նշագծում** | | |
| 1 | Ասֆալբետոնե շերտի իրականացում անցումնե | տն | 5,96 |
| | րի տակ «Բ» տիպի - 5 սմ հաստությամբ և մինչ անցում արհեստական թմբի իրականացում -2 հատ,անցում - 2 հատ | | |
| 2 | Անցումների յուղաներկում 40 սմ լայնությամբ | 100 մ² | 0,144 |

| | | | |
|---|---|---|---|
| | Հարթակ | | |
| 1 | Հարթեցուցիչ շերտի իրականացում | տն | 20,20 |
| | «Բ» տիպի | | |
| 2 | Բիտումի տարածում գոյ. ունեցող ճանապար- | տն | 0,49 |
| | հային հիմքի վրա 0,5 տն/ 1000մԱ | | |
| 3 | Ծածկի վերին շերտի իրականացում H=5սմ | 100մ² | 11,20 |
| | «Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից | | |
| 4 | Կողնակների ամրացում ավազակոպիճով | 100մ² | 0,85 |
| | 10 սմ հաստությամբ 500 մմ լայնությամբ | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 900011020788

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Քարազարթ» ՍՊԸ
Ք.Սիսիան, Շիրվանզադե 5
<<ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 09811433
ՀՀ 1930057723820100

(ստորագրություն)
Կ.Տ.